ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 27 » փետրվարի 2020 թվական, N 6-Ն

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Ալավերդի համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Ալավերդի համայնքի հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված և 2019 թվականին իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ՝

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	Արթուր	Դավթյան			
2.	Կամո	Երիցյան			
3.	Արմեն	Կարապետյան			
4.	Սեյրան	Հովհաննիսյան			

5.	Արայիկ	Ձավարյան			
6.	Հարություն	Ձավարյան			
7.	Լաուրա	Մելիքսեթյան			
8.	Ալիկ	Նասիբյան			
9.	Սվետլանա	Պետրոսյան			
10.	Վալերի	Վարոսյան			
11.	Վիգեն	Քառյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ

Հավելված 2

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հ/Հ	Կատարված աշխատանքների անվանումը	Փաստացի արժեքը (հազար դրամ)
1	Ալավերդի համայնքի Ալավերդի, Աքորի և Հաղպատ բնակավայրերում կանաչապատ տարածքների վերականգնում, ընդլայնում և բարեկարգում	3812.50
2	Ալավերդի համայնքի Ալավերդի բնակավայրի հեղեղատարների մաքրում և նորի կառուցում	6073.70
3	Ալավերդի համայնքի Ալավերդի, Հաղպատ և Աքորի բնակավայրերի կարիքների համար աղբարկղերի ձեռքբերում և տեղադրում	4018.00
4	Ալավերդի համայնքի Ալավերդի և Աքորի բնակավայրերի փողոցների հենապատերի թափված քարերի, գլխաքարերի վերականգնում, հենապատի և ճեմուղու վերանորոգում	14011.60
5	Ալավերդի համայնքի Ալավերդի, Հաղպատ և Աքորի բնակավայրերի կարիքների համար էներգախնայող LED լուսատուների ձեռք բերում և տեղադրում	6924.83
6	Ալավերդի համայնքի Ալավերդի և Աքորի բնակավայրերում երեխաների և մեծահասակների համար խաղահրապարակների և մարզահրապարակների կառուցում	3746.46
7	Ալավերդի համայնքի նորակառույց շուկայի ներսի կահավորում	1895.00
8	Հաղպատ բնակավայրի 4-րդ և 10-րդ փողոցների հենապատերի կառուցում	2387.11
9	Ալավերդի համայնքի փողոցների փոտալցման աշխատանքներ	20490.00
10	Ալավերդի քաղաքի Թումանյան փողոցի մայթերի վերանորոգում	5226.21
11	Ալավերդի համայնքի Աքորի գյուղի ոռոգման ջանցերի վերանորոգում	355.60
12	Ալավերդու համայնքապետարանի կարիքների համար Ալավերդի համայնքի գերեզմանատան բարեկարգում	1739.80
13	Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի խմելու ջրագծի մասնակի վերանորոգում	217.24
14	Ալավերդի համայնքի Ալավերդի, Հաղպատ և Աքորի բնակավայրերում գտնվող, համայնքապետարանի ենթակայությամբ գործող հիմնարկ-ձեռնարկություններում, բազմաբնակարան շենքերի աղբատարների և աղբամանների, կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի տարածքներում կրծողասպան և միջատասպան աշխատանքների իրականացում	1621.44
15	Ալավերդի համայնքի Օլեգ Գորբունովի անվան մանկապատանեկան մարզադպրոցի տանիքին ֆոտովոլտային կայանի տեղադրում	1320.10
16	Ալավերդի համայնքի Արվեստի դպրոցի պատուհանների փոխարինում նորերով	1232.50
	Ընդամենը	**75072.10**
1	Կաճաճկուտ, Ջիլիզա և Ծաղկաշատ գյուղերում այլընտրանքային մոդելով նախադպրոցական ուսումնական հաստատության հիմնում	
2	Հաշմանդամություն ունեցող երեխաների համար ընդլայնված խնամքի ծառայության հիմնում	

Ալավերդի համայնքի ղեկավար՝ Ս.Խեչումյան

Ֆինանսների, ծրագրերի և գնումների բաժնի պետի պաշտոնակատար՝ Վ.Պապինյան